ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«02» 12 2024թ. N 21/Ռ-14

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-25/6

Մասնակից՝ «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերություն
/ՀՎՀՀ՝ 00142638, ՀՀ ք. Երևան, Վաղարշյան փ.12ա, 307ս, հեռ. + (374) 94 945588, karen.nersisyan@natksystems.com /

Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով 05.11.2024թ. հայտարարվել է ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-25/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերությունը: Գնահատող հանձնաժողովի 14.11.2024թ.-ին կայացած նիստում «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերով սահմանված կարգով հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և հնարավորություն է տրվալ մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հրավերով սահմանված ժամկետում «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերությունը հրավերով սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին է ուղարկել փաստաթղթերի փաթեթ: Հանձնաժողովը ուսումնասիրել է փաստաթղթերի փաթեթը և արձանագրել, որ «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության «Մասնագիտական փորձառությունը», «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշների գնահատման համար ներկայացրած փաստաթղթերը ամբողջական չեն:

Ըստ այդմ՝ «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ոչ ամբողջական փաստաթղթերը հնարավորություն չեն տալիս գնահատել մասնակցի մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրսներ չափանիշների համապատասխանությունը՝ հրավերով սահմանված պահանջներին:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ, 42-րդ կետերի, հրավերի 1-ին մասի 2.7, 8.9 և 8.10 կետերի պահանջներով, հայտերի գնահատման արդյունքների ամփոփման նիստում որոշել

է «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել ընկերության կողմից ներկայացրած հայտը՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով սահմանված պահանջի համաձայն, հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ՝ հայտ չի համապատասխանում հրավերով սահմանված հայտերի կազմման և ներկայացման պահանջներին՝ կարգի 41-րդ կետով և հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

Գնանշման հարցման ընթացակարգը հանձնաժողովի որոշմամբ հայտարարվել է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ըստ այդմ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ մասի իրավակարգավորմամբ և հիմք ընդունելով «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման փաստը՝ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով նախատեսված շտկման ենթակա փաստաթղթերը, որը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման.

Որոշեցի՝

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերությանը ներառելու համար դիմել լիազորված մարմին՝ համապատասխան գործընթացի կազմակերպման համար:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

12/2/2024

X

ԱԳՆԵՍԱ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Signed by: AGHABABYAN AGNESA 8004770010

Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ